

**ՀՀ ՀԱԿԱԿՈՒՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՄՈՒՏՔԻ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ՀԿԿ-ՀՄԱԱՊՁԲ-26/1**

« 12 » 05 2026թ.

ք. Երևան

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Կարեն Մարգարյանի, որը գործում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հայկ Ավետիսյանի, որը գործում է «ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

- ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.
- բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.
- գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

- ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,
- բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

- ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.
- բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.
- գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատուց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

- ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
 - բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,
- 2.1.8 Չննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լինել՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 4 217 712 /չորս միլիոն երկու հարյուր տասնյոթ հազար յոթ հարյուր տասներկու/ << դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վնասարարին պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 -

8.7 -

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 -

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

«Հ հակակոռուպցիոն կոմիտե»
ք.Երևան Վ.Վաղարշյան 13^ա
Ֆին. նախ. Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00243582
Հ/Հ 900011040947
Գլխավոր քարտուղար՝
Կ. Մարգարյան



ՎԱՃԱՌՈՂ

«ՋԻ-ԷՍ-ՍԻ» ՍՊԸ
ք.Երևան, Վ. Աճեմյան 18փ. 44շին.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930097159818000
ՀՎՀՀ 02258906
Տնօրեն՝ Հ. Ավետիսյան



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՏՈՒՅՑ

</>	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /<< դրամ/	ընդհանուր քանակը	մատակարարման	
							հասցեն	ժամկետը
1	4296116/1	մուտքի հսկողության համակարգ	<p>Մուտքի հսկման համակարգ լրակազմ Հավաքածուն ներառում է՝ 1. Պտտադռնակ 1 հատ DS-K3B220LX-L, DS-K3B220LX-R DS-K3B220LX-M ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Swing Barrier (արագ անցակետ / turnstile system) սերիայի սարքերը swing barrier (բացվող թևերով անցակետ) տիպի turnstile-ներ են, նախատեսված մարդկանց մուտքի/ելքի վերահսկման համար՝ բարձր հոսք ունեցող օբյեկտներում (փզնես կենտրոններ, մետրո, պետական շենքեր և այլն): L-ձախ մոդուլ, R-աջ մոդուլ (միասին ձևավորում են ամբողջական անցուղի):</p> <p>2. Մեխանիկական և համակարգային պարամետրեր. Շարժիչ՝ brushless motor (առանց խոզանակների), Աշխատանքային ռեսուրս (MCBF)՝ $\geq 3,000,000$ ցկլ, Տեսակ՝ swing barrier (բացվող թևերով), Թևերի նյութ՝ ակրիլային ապակի (acrylic), Կորպուս՝ չժանգոտվող պողպատ SUS304:</p> <p>3. Անցման կատարողականություն. Թողունակություն՝ 20-60 մարդ/րոպե/, Անցման լայնություն՝ 650 մմ կամ 900 մմ (լայն անցում), Անցման ուղղություն՝ LED ինդիկացիայով, Անցման ժամանակի կառավարում՝ ավտոմատ չեղարկում, եթե անցում չի կատարվում:</p> <p>4. Անվտանգության և վերահսկման համակարգ. Ինֆրակարմիր սենսորներ՝ 4 գույգ, Ֆունկցիաներ՝ Anti-tailgating (հետևից անցնելու կանխարգելում),</p>	լրակազմ	4 217 712	1	Ք.Երևան Կ.Վարդապետյան 13ա	Պայմանագիր կնքելուց հետո մինչև 15.05.2026թ.

			<p>Anti-pinch (սեղմումից պաշտպանություն), Անվտանգ բացում հորեհային ազդանշանի դեպքում (fail-safe), Թևերը ավտոմատ բացվում են արտակարգ իրավիճակներում, 5. Կառավարման և ինտերֆեյս. Ելքի կոճակ՝ 2 հատ Ալյումին մուտք՝ 1 հատ Ներկառուցված access controller՝ Չկա (կարելի է միացնել արտաքին համակարգ), Աջակցում է ինտեգրում՝ քարտ ընթացիչների դեմքի ճանաչման համակարգերի բիոմետրիկ սարքերի, 6. Էլեկտրական պարամետրեր. Սնուցում՝ AC 100–240 V, 50/60 Hz սպառվող հզորություն՝ ~30 W (standby) մինչև ~100 W (աշխատանքային պիկ) 7. Միջավայրային պայմաններ՝ աշխատանքային ջերմաստիճան՝ -30°C ~ +65°C Խոնավություն՝ 10% ~ 95% (առանց կոնդենսացիայի), Տեղադրում՝ ներսում և դրսում: 8. Չափսեր և քաշ. Չափսեր (առանց փաթեթավորման)՝ 1205 × 146 × 1000 մմ Քաշ՝ Ձախ (L)՝ ~17 կգ Միջին (M)՝ ~23 կգ, Աջ (R)՝ ~18.6 կգ, 9. Լրացուցիչ ֆունկցիաներ LED ինդիկացիա անցման ուղղության համար. Անցման թույլտվության ժամանակի սահմանում, Միաժամանակ մի քանի անցակետերի համատեղ աշխատանք, Հեշտ ինտեգրում անվտանգության համակարգերի հետ , Ներառում է Օրգ. ապակյոց դռնակ /347*525մմ/ 4 հատ, 2. Դեմքի ճանաչման և մուտքի վերահսկման սարք 6 հատ DS- KIT342MX-E1 ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՌԱԳԻՐ 1. Ընդհանուր նկարագրություն. Դեմքի ճանաչման և մուտքի վերահսկման սարք նախատեսված մուտքի վերահսկման համար, որը համատեղում է՝ դեմքի ճանաչում, մատնահետքի ճանաչում, քարտային նույնականացում: Կիրառվում է գրասենյակներում, բիզնես կենտրոններում, գործարաններում և պետական հաստատություններում: 2. Տրոցադրման և համակարգ. Էկրան՝ 4.3 դյույմ LCD սենսորային էկրան (272 × 480 կետայնությամբ), 3. Տեսախցիկ և ճանաչման համակարգ. Տեսախցիկ՝ 2 MP, երկակի լայնանկյուն ոսպյակ 4. Նույնականացման մեթոդներ.</p>
--	--	--	--

		<p>Դեմքի ճանաչում. Քարտ և PIN կոդի համակցված ռեժիմներ, Քարտի պարամետրեր հաճախականություն՝ 13.56 MHz Կարդացման հեռավորություն՝ 0-5 սմ Արագություն՝ < 1 սլկ 5. Հիշողության ծավալներ. Օգտագործողներ՝ մինչև 1500, դեմքեր՝ 1500, քարտեր՝ 3000 իրադարձություններ՝ 150,000, 6. Ցանց և կապ. Ethernet՝ 10/100, աջակցում է՝ TCP/IP, RTSP, ISAPI, ISUP 5. Wiegand 1 ելք (Wiegand 26/34)՝ արտաքին controller-ին միանալու համար, RS-485 1 պորտ (արտաքին քարտ-ընթացողի կամ անվտանգության մոդուլի համար), USB: 1 USB 2.0 պորտ (տվյալների արտահանման կամ որոնվածի թարնացման համար): 8. Ֆունկցիոնալ հնարավորություններ Anti-spoofing (պաշտպանություն կեղծումից), Face Mask Detection (դիմակի ճանաչում), երկկողմանի աուդիո (Two-way Audio), ձայնային հուշումներ (Audio Prompt), կառավարում Web Browser-ով, աշխատաժամանակի հաշվառում (Attendance) 9. Դռների կառավարում. Միանում է արտաքին վերահսկիչին (controller), որն էլ թույլ է տալիս կառավարել 2 և ավելի դռներ: ինքնուրույն (standalone) վիճակում սարքը կառավարում է միայն 1 դուռ 10. Էլեկտրական պարամետրեր. Սնուցում՝ 12 VDC / 1 A Սկալվող հզորություն՝ ≤ 10 W, 11. Միջավայրային պայմաններ. Ջերմաստիճան՝ -30°C ~ +60°C, խոնավություն՝ 0% ~ 90% (առանց կոնդենսացիայի), պաշտպանություն՝ IP65 (վիոշուց և ջրից պաշտպանված) 12. Չափսեր և քաշ. Չափսեր՝ 91.3 մմ × 181.3 մմ × 24.5 մմ, քաշ՝ մոտ 0.36 կգ (զուտ քաշ): 13. Լրացուցիչ հնարավորություններ. Ժամանակի համաժամանակեցում, Բազմալեզու ինտերֆեյս, Իրադարձությունների գրանցում: 3. Դեմքի ճանաչման և մուտքի վերահսկման սարք 11 հատ DS-K1T343MX SԵՆՏԻԿԿԱԿԱՆ ԲՆՈՒՄՁԱԳԻՐ 1. Ընդհանուր նկարագրություն.</p>
--	--	--

		<p>Դեմքի ճանաչման և մուտքի վերահսկման սարք՝ նախատեսված մուտքի վերահսկման համար, որը համատեղում է՝ դեմքի ճանաչում, մատնահետքի ճանաչում, քարտային նույնականացում, Կիրառվում է գրասենյակներում, բիզնես կենտրոններում, գործարաններում և պետական հաստատություններում:</p> <ol style="list-style-type: none"> 2. Ցուցադրման և համակարգ Էկրան՝ 3.97 դյույմ LCD սենտրային էկրան (480 × 800 կետայնությամբ) 3. Տեսախցիկ և ճանաչման համակարգ. Տեսախցիկ՝ 2 MP, երկակի լայնանկյուն ուսայնակ: 4. Նույնականացման մեթոդներ <p>Դեմքի ճանաչում.</p> <p>Քարտ և PIN կոդի համակցված ռեժիմներ,</p> <p>Քարտի պարամետրեր,</p> <p>Հաճախականություն՝ 13.56 MHz,</p> <p>Կարողացման հեռավորություն՝ 0–3 սմ, Արագություն՝ < 1 վրկ:</p> <ol style="list-style-type: none"> 5. Հիշողության ծավալներ. <p>Օգտագործողներ՝ մինչև 1500 դեմքեր, քարտեր՝ 3000, իրարարձություններ՝ 150,000</p> <ol style="list-style-type: none"> 6. Տանց և կապ. <p>Ethernet՝ 10/100 աջակցում է՝ TCP/IP, RTSP, ISAPI, ISUP 5.0</p> <p>Wiegand 1 ելք (Wiegand 26/34)՝ արտաքին controller-ին միանալու համար, RS-485 1 պորտ (արտաքին քարտ-ընթացողի կամ անվանագրության մոդուլի համար), USB: 1 USB 2.0 պորտ (տվյալների արտահանման կամ որոնվածի թարմացման համար):</p> <ol style="list-style-type: none"> 8. Տունկիռնալ հնարավորություններ Anti-spoofing (պաշտպանություն կեղծումից), Face Mask Detection (դիմակի ճանաչում), երկկողմանի աուդիո (Two-way Audio), ձայնային հոշումներ (Audio Prompt), կառավարում Web Browser-ի, iVMS-4200-ի կամ Hik-Connect-ի միջոցով, աշխատածանանակի հաշվառում (Attendance): 9. Դռների կառավարում. <p>Միանում է արտաքին վերահսկիչին (controller), որն էլ թույլ է տալիս կառավարել 2 և ավելի դռներ:</p> <p>Ինքնուրույն (standalone) վիճակում սարքը կառավարում է միայն 1 դռ</p> <ol style="list-style-type: none"> 10. Էներգիայի պարամետրեր. <p>Անուցում՝ 12 VDC / 1 A, սպասվող հզորություն՝ ≤ 10 W</p>			
--	--	--	--	--	--

			<p>11. Միջավայրային պայմաններ. ջերմաստիճան՝ $-10^{\circ}\text{C} \sim +50^{\circ}\text{C}$, խոնավություն՝ 10% ~ 90% (առանց կոնդենսացիայի), պաշտպանություն՝ IP65 (փոշուց և ջրից պաշտպանված)</p> <p>12. Չափսեր և քաշ. Չափսեր՝ 118.4 մմ \times 118.4 մմ \times 21.8 մմ, քաշը մոտ՝ 0.23 կգ (զուտ քաշ)</p> <p>13. Լրացուցիչ հնարավորություններ՝ ժամանակի համաժամեցում, բազմալեզու ինտերֆեյս, իրադրոծությունների գրանցում:</p> <p>4. Ուտնակ դեմքի ճանաչման տերմինալների համար 4 հատ DS-KAB6-ZU1 ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Մոնտաժային հենակ (Bracket) դեմքի ճանաչման տերմինալների համար. Մոդել՝ DS-KAB6-ZU1</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն. DS-KAB6-ZU1-ը մոնտաժային հենակ (bracket) է, նախատեսված դեմքի ճանաչման և access control տերմինալների տեղադրման համար, turnstile կամ speed gate համակարգերի վրա:</p> <p>Սարքը ապահովում է սարքի կայուն, անվտանգ և ճիշտ դիրքով տեղադրում՝ հատկապես անցավետային համակարգերում:</p> <p>2. Նպատակ և կիրառություն. Տեղադրում՝ turnstile համակարգերի վրա, speed gate անցակետերի վրա, Նախատեսված է face recognition տերմինալների համար: Համատեղելի է այն մոդելների հետ, որոնք աջակցում են gang box տեղադրում: Օգտագործվում է մուտքի վերահսկման համակարգերում:</p> <p>3. Կառուցվածք և նյութ. Նյութ՝ AL-6061 ալյումինե համաձուլվածք, Բարձր դիմացկունություն և հակակոռոզիոն հատկություն՝ մեխանիկական կայուն և երկարաժամկետ օգտագործման համար նախատեսված,</p> <p>4. Չափսեր և քաշ. Չափսեր՝ 100 \times 100 \times 196 մմ, քաշ՝ մոտ 1.1 կգ:</p> <p>5. Տեղադրման պայմաններ. Տեղադրում՝ ներքին (indoor) արտաքին (outdoor) միջավայրում, Հեշտ և արագ մոնտաժ, Ապահովում է սարքի ճիշտ անկյուն և դիրք: 6. Համատեղելիություն. Համատեղելի է Hikvision face recognition տերմինալների հետ: 7. Կառուցվածքային առավելություններ.</p>		
--	--	--	--	--	--

<p>Անուր մետաղական կառուցվածք, Բարձր դիմարդյուն արտաքին ազդեցությունների նկատմամբ, Կայուն ամրացում turnstile-ի վրա, Հարմար ինտեգրում access control համակարգերի հետ:</p>	<p>8. Տեխնիկական առանձնահատկություններ. Passive սարք (չի պահանջում սնուցում) նախատեսված է միայն մոնտաժային նպատակների համար, Չի պարունակում էլեկտրոնային բաղադրիչներ:</p>	<p>9. Կազմաձևում. 1 x մոնտաժային հենակ (bracket) Տեղադրման պարագաներ (ամրացումներ)</p>	<p>5. Սերմակ 2 հատ TMG080-3 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Turnstile Control Panel (OPEN / CLOSE / STOP)</p>	<p>Մոդել՝ TMG080-3</p>	<p>1. Ընդհանուր նկարագրություն. TMG080-3-ը turnstile համակարգի կառավարման պարզ կոճակային վահանակ է, նախատեսված եռոտանի անցակետերի (tripod turnstile) ձեռքով կառավարման համար:</p>	<p>Սարքը ապահովում է անցակետի հիմնական ֆունկցիաները՝ բացում (OPEN) փակում/արգելափակում (CLOSE) կանգ/չեղարկում (STOP)</p>	<p>2. Կառավարման ֆունկցիաներ OPEN կոճակ՝ մեկ անցում թույլատրելու համար, CLOSE կոճակ՝ անցումը արգելափակելու համար, STOP կոճակ՝ ընթացիկ գործողության դադարեցման համար, Ձեռքով կառավարում turnstile մեխանիզմի վրա՝ անմիջական արձագանք կոճակի սեղմանը,</p>	<p>3. Համատեղելիություն. Tripod turnstile համակարգեր, Swing / flap barrier համակարգեր (կախված կոնֆիգուրացիայից): Համատեղելի է մեխանիկական և էլեկտրամեխանիկական lock համակարգերի հետ:</p>	<p>4. Միացում. Կապ՝ լարային (wired connection), Աշխատում է dry contact (NO/NC) տրամաբանությամբ, հեշտ ինտեգրում turnstile control board-ի հետ,</p>								

5. Էլեկտրական բնութագիր.
 Ցածր լարման կառավարման համակարգ,
 Էներգասպառում՝ նվազագույն աշխատանք շարունակական ռեժիմով,
 6. Կառուցվածք.
 Պարզ կոճակային վահանակ, դիմացկուն մեխանիկական կոճակներ՝
 նախատեսված է երկարաժամկետ օգտագործման համար
6. Չկառավարվող ցանցային սիլիչ 2 հատ DS-3E0105D-O
ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
 Նախատեսված է փոքր գրասենյակների կամ տնային օգտագործման համար.
 1.Ընդհանուր նկարագրություն. 5-պորտանի Fast Ethernet սիլիչ՝ պլաստիկ
 իրանով: Աջակցում է Plug & Play (միացրու և աշխատեցրու) սկզբունքին:
 2.Ցանցային պարամետրեր.
 Պորտեր. 5 հատ 10/100 Mbps RJ45 պորտ:
 Թողունակություն (Switching Capacity). 1 Gbps:
 Packet Forwarding Rate. 0.744 Mpps:
 MAC Address Table. 2 K (որոշ տարբերակներում՝ 1 K):
 3.Էլեկտրական պարամետրեր.
 Մնուցում. 5 VDC, 0.6 A:
 Սպառվող հզորություն. ≤ 3 W:
 4.Միջավայրային պայմաններ.
 Ջերմաստիճան. 0°C-ից մինչև +40°C:
 Պաշտպանություն. 2 KV գերլարումից պաշտպանություն (surge protection):
 5.Չափսեր և քաշ.
 Չափսեր. 83.0 մմ × 52.0 մմ × 22.0 մմ:
 Քաշ. մոտ 0.093 կգ:
 Լրացուցիչ. Store-and-forward փոխանցման մեթոդ, առանց հովացման
 համակարգի (fanless)՝ լուռ աշխատանքի համար:
7. Էլեկտրական փական 1հատ DS-K4T108
ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
 Նախատեսված է դռների անվտանգ փակումն ապահովելու համար:
 1.Ընդհանուր նկարագրություն.
 Էլեկտրական փական՝ նախատեսված փայտե, ապակյա և մետաղական
 դռների համար: Այն Fail-Safe տեսակի է (եթր հոսանքն անջատվում է, դուռը
 բացվում է):
 2. Անվտանգություն և հուսալիություն.

<p>Ունի ներկառուցված ֆոտոէլեկտրական հսկողություն՝ մեխանիկական անաարքությունները կանխելու համար և ավտոմատ փակման ժամանակաչափի (Delay timer):</p>	<p>3. Էլեկտրական պարամետրեր. Մնուցում. 12 VDC:</p>	<p>Աշխատանքային հոսանք՝ 900 mA (մեկնարկային), 100 mA (սպասման ռեժիմում):</p>	<p>4. Ժամանակի կարգավորում՝ ավտոմատ փակման ուշացում՝ 0, 3, 6 կամ 9 վայրկյան:</p>	<p>5. Ինդիկացիա և ազդանշան՝ ունի դրան կարգավիճակի ելք (NO/COM կոնտակտներ):</p>	<p>6. Չափսեր և քաշ. Մարմնի չափսերը. 205 մմ × 34 մմ × 42 մմ, Սողնակի (bolt) չափսերը՝ 16 մմ (երկարություն) × 16 մմ (տրամագիծ): Քաշը՝ 0.74 կգ:</p>	<p>7. Միջավայրային պայմաններ. Ջերմաստիճանը՝ -10°C-ից մինչև +55°C:</p>	<p>8. Էլեկտրական փական 1հատ DS-K4T100-U2 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p>	<p>Ապակյա դռների համար նախատեսված էլեկտրական փական է (electric bolt): Ունի Ա-աձև տակդիր, ինչը թույլ է տալիս այն տեղադրել առանց շրջանակի (frameless) ապակյա դռների վրա՝ առանց անցքեր բացելու:</p>	<p>1. Ընդհանուր նկարագրություն. Էլեկտրական տրնակ՝ նախատեսված առանց շրջանակի ապակյա դռների համար: Fail-Safe տեսակի է (հոսանքազրկվելիս դուռը բացվում է):</p>	<p>2. Կիրառելիություն. Հարմար է 10-ից 15 մմ հաստությամբ ապակյա դռների համար:</p>	<p>3. Էլեկտրական պարամետրեր. 4. Մնուցում. 12 VDC:</p>	<p>5. Աշխատանքային հոսանք՝ 900 mA (մեկնարկային), 150 mA (սպասման ռեժիմում),</p>	<p>6. Տունկցիոնալություն. Ավտոմատ փակման ուշացման ժամանակաչափ՝ 0, 3, 6 կամ 9 վայրկյան:</p>	<p>Դրան կարգավիճակի ազդանշանային ելք (Signal Output): 7. Չափսեր. Մարմնի. 205 մմ × 34 մմ × 42 մմ, Ա-աձև հենակ. 93 մմ × 43 մմ × 32 մմ:</p>	

	<p>8. Միջավայրային պայմաններ. Ջերմաստիճանը՝ -10°C-ից մինչև +55°C:</p> <p>9. Էլեկտրական փական 2 հատ Eff-Eff - E7AE HZ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Էլեկտրական հարվածային փական է (electric strike), որը տեղադրվում է դռան շրջանակի մեջ՝ փոխարինելով սովորական փականի դիմացի մետաղյա հատվածին:</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն. Էլեկտրական հարվածային փական՝ նախատեսված ստանդարտ դռների համար: Այն Fail-Safe տեսակի է, երբ հոսանքն անջատվում է, դուռը բացվում է:</p> <p>2. Անվտանգություն. Ունի HZ տարբերակը, ինչը նշանակում է, որ այն ունի ուժեղացված կառուցվածք և դիմադրողականություն:</p> <p>3. Էլեկտրական պարամետրեր. Սնուցում. 12 VDC; Հատկություն. Նախատեսված է երկարատև աշխատանքի համար (100% duty cycle), այսինքն՝ կարող է երկար ժամանակ մնալ հոսանքի տակ առանց տաքանալու:</p> <p>4. Կառուցվածք. Ունի կարգավորվող լեզվակ (մինչև 3 մմ), ինչը թույլ է տալիս ճշգրիտ համապատասխանեցնել դռան լեզվակի հետ՝ տեղադրման ժամանակ: Դիմացկունություն. Դիմակայում է մինչև 3500 N (մոտ 350 կգ) ճնշման:</p> <p>5. Միջավայրային պայմաններ. Ջերմաստիճանը՝ -15°C-ից մինչև +40°C:</p> <p>10. Մեխանիկական էլքի կոճակ 2 հատ AT-H805A ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ Օգտագործվում է մուտքի հսկողության համակարգերում՝ տերմինալները և էլեկտրական կողպեքները կայուն հոսանքով ապահովելու համար:</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն. Մուտքի հսկման համակարգերի համար նախատեսված սնուցման աղբյուր: Այն փոփոխական լարումը (AC) դարձնում է կայուն հաստատուն լարում (DC):</p> <p>2. Էլեկտրական պարամետրեր.</p>
--	---

			<p>Մուտքային լարում՝ AC 110V - 240V (50/60Hz): Ելքային լարում՝ DC 12V: Ելքային հոսանք՝ 5A (ինչը բավարար է մի քանի սարք և կողպեք սնուցելու համար):</p> <p>3. Ցունկցիոնալություն. Ժամանակի կարգավորում (Delay). Ունի ներկառուցված ժամանակաչափ՝ դրան բաց մնալու տևողությունը կարգավորելու համար (0-15 վայրկյան): Պաշտպանություն. Ապահովված է կարճ միացումից և գերբեռնվածությունից պաշտպանող համակարգերով: Միացման հնարավորություն. Ունի հատուկ ելքեր էլեկտրական կողմերների (NO/NC), դուրս գալու կոճակի և վերահսկիչի (controller) համար: Անխափան աշխատանք. Աջակցում է արտաքին մարտկոցի (Battery) միացում, որպեսզի հոսանքի անջատման դեպքում համակարգը շարունակի աշխատել: 4. Իրան. Մետաղական ամուր տուփ, որը հեշտացնում է մոնտաժը պատին: 11. Անլար կամուրջ 1հատ DS-3WF0BC-2NT ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒՑԱԳԻՐ Նախատեսված է վերելակների տեսահսկման համակարգերի համար: Այն թույլ է տալիս փոխանցել տեսանյութը վերելակի խցիկից առանց շարժական մարկանների օգտագործման: 1. Ընդհանուր նկարագրություն. 2.4 ԳՀց հաճախականությամբ աշխատող անլար կամուրջ՝ նախատեսված վերելակներում տվյալների կայուն փոխանցման համար: 2. Ցանցային պարամետրեր. Անլար ստանդարտ՝ IEEE 802.11b/g/n (2x2 MIMO): Արագություն՝ մինչև 300 Մբ/վ: Հեռավորություն՝ առավելագույնը 200 մետր: Անտենա՝ ներկառուցված 7 dBi հզորությամբ անտենա (65° հորիզոնական և ուղղահայաց անկյուն): 3. Միացումներ. Պորտեր 2 հատ 10/100 Mbps RJ45 պորտ: 4. Էլեկտրական պարամետրեր. Անուցում՝ 12 VDC / 1 A կամ պասիվ PoE (12-24 V):</p>				
--	--	--	--	--	--	--	--

Ապավիղ հզորություն՝ մաքսիմալ 3.7 Վտ:

5. Միջավայրային պայմաններ.

Ջերմաստիճան. -30°C -ից մինչև $+70^{\circ}\text{C}$:

Պաշտպանություն. IP55 դասի պաշտպանություն:

6. Չափսեր և քաշ.

Չափսեր՝ 90.8 մմ \times 187.87 մմ \times 57.87 մմ:

Քաշ՝ մոտ 0.26 կգ (մեկ սարքը):

12. Օրգ. ապակուց դռնակ 2 հատ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նյութ.

Բարձրորակ օրգանական ապակի, որն ավելի թեթև է և ամուր, քան սովորական ապակին:

Չափսեր՝ 347 մմ (լայնություն) \times 525 մմ (բարձրություն):

13. Լիցենզիա 1հատ HikCentral-P-ACS-16Door/Base/Promo

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Նախատեսված է մինչև 16 դուռ կառավարելու համար: Այն հանդիսանում է համակարգի հիմքը (foundation), որի վրա կարելի է հետագայում ավելացնել այլ մոդուլներ:

1. Ընդհանուր նկարագրություն.

Մուտքի հսկման համակարգի (ACS) բազային փաթեթ, որը ներառում է ծրագրի ակտիվացումը և 16 դռների կառավարման իրավունքը:

2. Կառավարման հնարավորություններ.

Դռների քանակ՝ առավելագույնը 16 դուռ:

Օգտատերեր՝ աջակցում է օգտատերերի բազայի ստեղծում, մուտքի իրավունքների բաշխում ըստ խմբերի կամ անհատների:

Իրադարձություններ՝ իրական ժամանակում դռների կարգավիճակի հսկողություն և իրադարձությունների մոնիթորինգ:

3. Տունկցիոնալ առանձնահատկություններ.

Տափասայների կառավարում՝ ներառում է տափասային ազդանշանների մշակում (Alarm Management):

Open API. Աջակցում է բաց API՝ այլ համակարգերի հետ ինտեգրվելու համար:

Համակարգի առողջություն՝ ներառում է Health Monitoring ֆունկցիան՝ սարքերի աշխատանքը հսկելու համար:

4. Ընդլայնման հնարավորություն.

					<p>Սա բազային փոփոխություն է, որից հետո կարելի է գնել հավելյալ «Add-on» փոփոխություններ՝ դռների բանալին ավելացնելու կամ աշխատատեղումնակի հաշվարման (Attendance) մոդուլն ակտիվացնելու համար:</p> <p>14. Լիցենզիա 1huan HikCentral-P-Attendance/Module/ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Ծրագրային ապահովման հավելյալ մոդուլ, որը նախատեսված է աշխատատեղումնակի հաշվարման (Time Attendance) գործառնություններն ակտիվացնելու համար:</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն.</p> <p>Աշխատատեղումնակի հաշվարման մասնագիտացված մոդուլ, որն ինտեգրվում է բազային համակարգին (Base License):</p> <p>2. Հիմնական ֆունկցիաներ.</p> <p>Հաճախորդների հսկողություն՝ գրանցում է աշխատակիցների մուտքի և ելքի ժամերը:</p> <p>Գրաֆիկների կառավարում՝ թույլ է տալիս սահմանել աշխատանքային հերթափոխեր, ճկուն գրաֆիկներ և հանգստյան օրեր:</p> <p>Հաշվետվություններ՝ ավտոմատ ձևավորում է ավելի քան 20 տեսակի հաշվետվություններ (ուշացումներ, բացակայություններ, արտաժամյա աշխատանք և այլն):</p> <p>3. Առանձնահատկություններ.</p> <p>Արտահանում՝ հաշվետվությունները կարելի է արտահանել Excel, PDF կամ CSV ձևաչափերով:</p> <p>Ինտեգրում՝ հնարավորություն է տալիս տվյալները փոխանցել ERP կամ HR (աշխատավարձի հաշվարկման) համակարգերին:</p> <p>Բազմահարթակ՝ կառավարումը հասանելի է ինչպես համակարգչով (Web Client/Control Client), այնպես էլ Hik-Connect հավելվածով:</p>
					<p>15. Լիցենզիա 1huan HikCentral-P-Visitor/Module</p> <p>ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>HikCentral Professional համակարգի հավելյալ մոդուլ է, որը նախատեսված է այցելուների կառավարման (Visitor Management) գործընթացը ավտոմատացնելու համար:</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն.</p> <p>Այցելուների գրանցման, հաշվարման և մուտքի իրավունքների տրամադրման մասնագիտացված մոդուլ:</p> <p>2. Գրանցման հնարավորություններ.</p>

ինքնագրանցում՝ այցելուն կարող է նախապես գրանցվել համակարգում (Online Pre-registration) կամ տեղում՝ հատուկ տերմինալի միջոցով:
Հրավերներ՝ աշխատակիցները կարող են ուղարկել հրավերներ, որոնք ներառում են QR կոդեր՝ արագ մուտք գործելու համար:

3. Մուտքի վերահսկում.
Ժամանակավոր իրավունքներ՝ տրամադրում է մուտքի ժամանակավոր իրավունք (դեմքի ճանաչմամբ, քարտով կամ QR կոդով), որն ավտոմատ չեղարկվում է այցի ավարտից հետո:

4. Տուննցիոնալ առանձնահատկություններ.
Այցելուների պատմություն՝ պահպանում է բոլոր այցելուների տվյալները և նրանց տեղաշարժի պատմությունը:
Սև ցուցակ՝ հնարավորություն է տալիս արգելել անցանկալի անձանց մուտքը:
Ինտեգրում՝ համատեղելի է անձնագրային սկաներների և պիտակներ տպող սարքերի (Badge printer) հետ:

16. Մնուցման բլոկ 5 հատ PC-120070A

ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԿԱԳԻՐ

Նախատեսված է մեծ թվով սարքավորումների կամ բարձր սպառում ունեցող համակարգերի համար:

1. Ընդհանուր նկարագրություն՝ բարձր հզորությամբ սնուցման աղբյուր, որը փոփոխական լարումը (AC) վերափոխում է կայուն հաստատուն լարման (DC):

2. Էլեկտրական պարամետրեր.
Մուտքային լարում՝ AC 100V - 240V:

Ելքային լարում՝ DC12V:

Ելքային հոսանք՝ 7A (ինչը թույլ է տալիս սնուցել միաժամանակ մի քանի տեսախցիկ կամ մուտքի հսկման տերմինալներ):

3. Պաշտպանություն.
Ունի ներկառուցված պաշտպանություն կարճ միացումից (Short Circuit Protection):

Պաշտպանություն գերբեռնվածությունից (Overload Protection) և լարման տատանումներից:

4. Իրան և միացում.

Սովորաբար ունի ստանդարտ DC plug (5.5 x 2.1 մմ) կամ ելքային լարեր՝ կախված կոնկրետ տարբերակից:

Ունի լուսային ինդիկատոր (LED), որը ցույց է տալիս սնուցման առկայությունը:

17. Կոմբինացված քարտ 70 հատ S50+TK4100

			<p>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Կոմբինացված քարտ է, որն իր մեջ ներառում է երկու տարբեր տեսակի չիպեր: Սա թույլ է տալիս նույն քարտն օգտագործել տարբեր ստանդարտների ընթացիկների հետ</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն՝ երկհաճախականային սմարթ-քարտ (Dual Chip), որը համատեղում է բարձր (13.56 MHz) և ցածր (125 kHz) հաճախականությունները:</p> <p>2. Չիպ 1 (Mifare S50).</p> <p>Հաճախականություն՝ 13.56 MHz:</p> <p>Հիշողություն՝ 1 KB (կարդալու և գրելու հնարավորությամբ):</p> <p>Ստանդարտ՝ ISO14443A:</p> <p>3. Չիպ 2 (TK4100).</p> <p>Հաճախականություն՝ 125 kHz:</p> <p>Տեսակ՝ միայն կարդացվող (Read-only):</p> <p>Համատեղելիություն՝ ամբողջությամբ համատեղելի է EM4100/EM4102 ստանդարտների հետ:</p> <p>5. Ֆիզիկական պարամետրեր.</p> <p>Նյութ՝ բարձրորակ PVC պլաստիկ:</p> <p>Չափսեր՝ 85.5 մմ x 54 մմ x 0.84 մմ (ստանդարտ վարկային քարտի չափս):</p> <p>6. Կիրառելիություն՝ իրեալական է այն օբյեկտների համար, որտեղ միաժամանակ տեղադրված են հին (125 kHz) և նոր (Mifare) սերնդի ընթացիկներ:</p>		
			<p>18. Մալուխ UTP 650 մետր</p> <p>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Համակարգչային և տեսահսկման ցանցերի համար նախատեսված ամենատարածված մալուխն է.</p> <p>1. Տեսակ՝ UTP, ինչը նրան դարձնում է ճկուն և հեշտ մոնտաժվող:</p> <p>2. Նյութ.</p> <p>Copper (Պղինձ)՝ ապահովում է լավագույն կապը և PoE սնուցումը երկար հեռավորության վրա (մինչև 100մ):</p> <p>CCA (Պղնձապատ այրամին)՝ ավելի էժան տարբերակ է՝ կարճ հեռավորությունների համար:</p> <p>3. Պաշտպանություն՝ լինում է ներքին (Indoor) և արտաքին (Outdoor) օգտագործման համար՝ կախված մակերեսային շերտի դիմացկունությունից:</p>		
			<p>19. Հոսանքի մալուխ 340 մետր</p>		

			<p>ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Նախատեսված է արքավորումները սնուցման բյուրին կամ էլեկտրական ցանցին միացնելու համար:</p> <p>Նյութ՝ միայն պղինձ (Copper)՝ կայուն հոսանք ապահովելու և տաքացումից խուսափելու համար:</p> <p>Մեկուսացում՝ կրկնակի PVC մեկուսացում՝ պաշտպանված մեխանիկական վնասվածքներից:</p> <p>20. Չկառավարվող ցանցային սլիչ 3 հատ DS-3E0108D-O ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ</p> <p>Նախատեսված է փոքր գրասենյակների կամ տնային օգտագործման համար.</p> <p>1. Ընդհանուր նկարագրություն՝ 8-պորտանի Fast Ethernet սլիչ պլաստիկ իրանով: Աջակցում է Plug & Play (միացրու և աշխատեցրու) սկզբունքին:</p> <p>2. Ցանցային պարամետրեր.</p> <p>Պորտեր 8 հատ 10/100 Mbps RJ45 պորտ:</p> <p>Թողունակություն (Switching Capacity) 1 Gbps:</p> <p>Packet Forwarding Rate 0.744 Mpps:</p> <p>MAC Address Table 2 K (որոշ տարբերակներում՝ 1 K):</p> <p>3. Էլեկտրական պարամետրեր.</p> <p>Մնուցում՝ 5 VDC, 0.6 A:</p> <p>Սպառվող հզորություն՝ ≤ 3 W:</p> <p>4. Միջավայրային պայմաններ.</p> <p>Ջերմաստիճան՝ 0°C-ից մինչև +40°C:</p> <p>Պաշտպանություն՝ 2 KV գերլարումից պաշտպանություն (surge protection):</p> <p>5. Չափսեր և քաշ.</p> <p>Չափսեր՝ 83.0 մմ × 52.0 մմ × 22.0 մմ:</p> <p>Քաշ՝ մոտ 0.093 կգ:</p> <p>Լրացուցիչ՝ Store-and-forward փոխանցման մեթոդ, առանց հովացման համակարգի (fanless)՝ լուր աշխատանքի համար:</p> <p>21. Ուոնսկի դեմքի ճանաչման տերմինալների համար 4 հատ DS-KAB6-W1 22. Էլեկտրական փական 1 հատ DS-K4H258S</p> <p>Միարձանի էլեկտրամագնիսական կողպեք, նախատեսված մուտքի կառավարման համակարգերի (ACS) համար</p> <p>23. Էլեկտրական փականի մաս 1 հատ DS-K4H258-LZ</p>
--	--	--	--

		<p>L- և Z-աձև փակագծերի ամրացման հավաքածու՝ DS-K4H258 շարքի էլեկտրամագնիսական կողպեքներ (մինչև 280 կգ պահող ուժով) ներսից բացվող դռների վրա տեղադրելու համար:</p> <p>24. Ունիվերսալ դռան փակիչ 1 հատ DS-K4DC103 EN3 ստանդարտի փական ուժով, որը նախատեսված է 40-ից 65 կգ քաշ ունեցող դռների ավտոմատ և սահուն փական համար:</p> <p>25. 7 դյույմանոց գունավոր անալոգային 1 հատ DS-KH2220 Տեսախնտերկում (ներքին կայան)՝ 4 լարով միացմամբ: Այն նախատեսված է ներքին մուտքի կառավարման համար և աջակցում է կապը գանգերի վահանակների և անալոգային տեսախցիկների հետ: Հիմնական հատկանիշներ՝ էլրան՝ 7 դյույմանոց TFT LCD էկրան՝ 800 x 480 լուծաչափով: Կառավարում՝ Մեխանիկական (ֆիզիկական)</p> <p>26. Վանդալակայուն 4-լարանի անալոգային տեսախնտերկումի վահանակ 1 հատ Հագեցած բարձր թույլտվությամբ 2 ՄՊ տեսախցիկով: Այն տեղադրված է ցինկի համաձուլվածքից պատրաստված պատյանում և նախատեսված է բացօթյա տեղադրման համար: Հիմնական առանձնահատկությունները՝ Տեսախցիկ՝ 2 ՄՊ անցք (թաքնված օբյեկտիվ)՝ 1920 x 1080</p> <p>27. Անկյունակ՝ 1 հատ DS-KAB21-B տեսախնտերկումի գանգերի վահանակների անկյունային տեղադրման համար</p> <p>Նախատեսված է մուտքի կառավարման համակարգերում (ACS) օգտագործելու համար: Այն թույլ է տալիս բացել դուռը՝ առանց սարքին դիպչելու, ինչը հատկապես կարևոր է բարձր հիգիենիկ պահանջներ ունեցող տարածքներում:</p>			
		<p>Մոնտաժային նյութեր</p> <p>Մատակարարը ամբողջությամբ պետք է իրականացնի ապրանքների ամբողջական տեղադրումը, մոնտաժումն ու կարգավորումը, ծրագրավորումը, ծրագրային կարգաբեռումը, համակցումը, ինչպես նաև աշխատակազմի ուսուցումը գործող համակազմին:</p>			

		<p>Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ (MAF), ինչպես նաև պետք է ունենա որակավորված մասնագետներ արագարկված ապրանքանիշերի (ապրանքանիշերի) արտադրողի (արտադրողների) կողմից:</p>							
--	--	---	--	--	--	--	--	--	--

ԳՆՈՐԴ

**ՀՀ հավակոտուպցիոն կոմիտե
ք. Երևան Վ. Վարդաշյան 13^ա
Ֆին. նախ. Գործառնական վարչություն
ՀՎՀՀ 00243582**

Հ/Հ 900011040947

**Գլխավոր քարտուղար՝
Կ. Մարգարյան**



ՎԱՃԱՌՈՂ

**«ՋԻ-Էս-Սի» ՍՊԸ
ք. Երևան, Վ. Աճեմյան 18փ. 44շին.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930097159818000**

ՀՎՀՀ 02258906

Տնօրեն՝ Հ. Ավետիսյան



Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների						Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված 3.1
« 12 » 05. 2026թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով
Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

Ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն